


ԱԹԱՆԵՍ ՍԵՆԱԼ

Ա Ր Յ Ո Ւ Ն
Յ Ե Վ
Հ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ



Հ Ս Խ Հ Գ Ե Տ Հ Բ Ա Տ — Յ Ե Բ Ե Վ Ա Ն 1936

8105 JUL

19 NOV 2011


891.99
U-40

ԱԹԱՆԵՍ ՍԵՆԱԼ

Ա. Բ. Յ. Ո. Ի. Ն.

ՅԵՎ

ՀԱՂԹԱՆԱԿ



ՀՍԽՀ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936

Պատ. խմբ. [REDACTED]
Տեխ. խմբ. [REDACTED]
Սրբագրիչ՝ Ո. Գ ա ս ա ռ ջ յ ա Ն

Գլավլիտ Կ—1090, Պատվեր 510
Հրատ. 3682, Տիրաժ 2000
Պետհրատի տպարան
Ցերեան, II Գնունի, 4

Հանձնված է արտադրության 1 ապրիլի 1936 թ.
Ստորագրված է տպագրութ. 15 ապրիլի 1936 թ.

ԳԻՆԸ 90 ԿՈՊ.



АТАНЕС СЕНАЛ
КРОВЬ И ПОБЕДА
ГИЗ ССР Армения, Эривань

Դ Ա Ր Ձ

Վորպես ռազմիկ մի անվեհեր
Սեղմած կրծքիս մի հրացան,
Բարձրանում եմ յես սարն ի վեր —
Կրծքիս զարկած աստղ հինդթեյան:

Գյուղ եմ դալիս յես բանակից
Սրտում իմ յերդ, խինդ ու ծիծաղ,
Իմ որորան քաղցր ու անգին,
Իմ հույզերի ջինջ ծիածան:

Գալիս եմ յես — Էջ, մարդ դարձած
Իմ ընկերներ՝ հողի, քարի,
Վեր ձեր սիրտը չերգով պայծառ —
Տանեմ ինձ հետ դեպի դալիք:

Չ Ա Պ Ա Յ Ե Վ

Վրոչ մի ժայռի ճակատին
 Փորագրված դեռ չկա
 Պրոֆիլը քո անգին,
 Իմ զորավար մեծանուն,
 Մենք կը կերտենք պատկերդ,
 Վոր կենդանի դու մնաս,
 Վոր աշխարհը իմանա —
 Թե մենք վրոչք ենք մահանում:

 Դու դեմ ավիր կուրծքը քո
 Գնդակներին թշնամու,
 Քեզ ահ չազդեց, վախ չազդեց
 Վրոչ մի հարված, վրոչ մի բերդ.
 Մեր հուշերում դու թողիր
 Անմահական մի անուն, —
 Դարերում դեռ չ'զրված,
 Անորինակ մի լեզենդ...

 Քո մասին են միշտ խոսում
 Հերոսները մեր դարի,
 Լեզու առած ծառերը

Քո մասին են պատմում հար,
 Վոր հանձնեցիր կյանքը քո
 Ալիքներին կատաղի,
 Դարձար անմահ քո մահով,
 Դարձար անմահ զորավար:

Վորպես կարմիր մի զինվոր —
 Կանգնած դիրքում աներեր, —
 Առած թափը քո բազկի,
 Առած ավյուն ու յեռանդ,
 Քո արյունոտ զորշով
 Յես հսկում եմ դիրքը մեր —
 Լեզյոնների հետ բազում,
 Ծով գնդերի հետ անպարտ:

 Յես ուզում եմ բանակիդ
 Լինել զինվոր՝ առաջող,
 Լինել կարմիր զորական
 Մրկաշունչ մարտում մեծ,
 Գրոհ գնալ, գրոհել —
 Դեռ չըլսված շառաչով, —
 Առնել վերջին դիրքերը
 Ու լեռները բարձրաբերձ...

 Ախ, ժպիտը քո դեմքի,
 Ծիծաղը քո կարկաշուն,
 Քո աչքերի կրակը,
 Քո հայացքը սիրտ կխող...
 Իմ աղանջին դեռ հիմա

Հրամանն ե քո հնչում,—
Ձեմ մոռանում յես յերբեք
Քո համբավը մեծազոր:

Յերբ շառաչեն — շառաչեն
Ռազմի ահեղ փողերը,
Անծալրածիր յերկրում իմ՝
Կովի քայլերդ շառաչի,
Յես կընետեմ դեպի մարտ
Իմ արյունոտ տողերը,
Դասակներով տողերիս —
Յես կըքայլեմ առաջից:

Վհչ մի ժայռի ճակատի
Փորագրված դեռ չկա
Պրոֆիլը քո անգին,
Իմ զորավար մեծանուն,
Մենք կըփորենք նկարդ,
Վոր կենդանի դու մնաս,
Վոր աշխարհը իմանա —
Թե մենք վաճեց ենք մահանումս

Լ Ի Ր Ի Ք Ա Կ Ա Ն Ց Ե Ր Գ

Մանուկ որերս անցան գնացին,
Մենակ ձեր յերգը յես չեմ մոռանում,
Տներ խարխլած, հյուղեր ցանուցիր —
Գյուղերի անդեմ մոխրացած անուն:

Մեր տունը կանգնած գյուղի գետտփին,
Շուրջը ուռիներ, յերկու ջրաղաց...
Տան կտրին նստած իմ ճերմակ պապին
Թերթում եր հոգու անդորրը խաղաղ:

Վորպես խարխլած, քանդված մի մակույկ՝
Փրփրած ջրերում կորար դու անհետ,
Յնդած իմ որոր, մանկություն կապույտ —
Ո՛ր, արյուն քշող մանկության իմ գետ...

Տան կտրի վրա, խոտի դեզի մոտ
Ծեր պապըս մեռավ մի գորշ իրիկուն,
Իմ հոգում թողեց մի վորբի կարոտ —
Գյուղերի փոշոտ, քարքարոտ միգում:

Աղքատի վռտով՝ անշոր, անտրեխ.
Թակեցի մեկ-մեկ դռները բոլոր,
Յերբեք չըտեսս մի պայծառ ցերեկ:
Անուշ գուրգուրանք, մայրական որոր...
||

Կապույտ աչքերով իմ՝ քույրը փոքրիկ
Մեռավ դողացող ձեռքերիս վրա...
Դժվար ե տանել ախ, ցավը փոքրի,
Յերբ ինքդ աղքատ ես, տունդ՝ ավերակ...
—

Մանուկ որերս անցան, գնացին,
Քո մորմոքը, գլուղ, յես չեմ մոռանում,
Տներ խարխլած, հյուղեր ցանուցիր,—
Գյուղերի անդեմ մոխրացած անուն...
—

Ա Ն Կ Ո Ւ Մ

Մանուկների պես դալուկ ու վտիտ,
Ծերերի նման մեջքից կուցած —
Սպասել են մեր ջինջ առավոտին
Ձեր խեղճ հասկերը արևից խանձված:

Արտերի կապույտ եկրանի վրա
Ձեր պատմությունը գրված կսկիծով,
Ձեր պատմությունը դարձրինք կրակ, —
Կովի հանեցինք ցասումի մի ծով...

Ձեր կսկիծները, մրմուռները սուր
Դեռ չեն մոռանում անտուն գլուղացիք,
Յերբ մի որ լեւանք կամքով ամբակուռ —
Տերերին ձեր չար անկում կարդացինք:

Յ Ե Ր Վ Ա Ր Ե Վ Ի Ն

Բարձրանում ես, արև', շողշողուն մի շալ
Գրած ուսերիդ.

Վողջճւյն քեզ արև', քո լուսաշաղ —

Ճառագայթած լույսերին:

Վոսկեղոծվում ես քո դեմ մեր դաշտերը,

Քո շողերի ներքո,

Քաջլում են առուլդ համաճանական վաշտերը —

Ծիծաղառատ չերգով:

Մըղերից քո առատ մեղրակաթ ե ծորում

Իմ յերկրի համար:

Ծըծում ենք նեկտարդ կաթիլ-կաթիլ,

Ծըծում ենք քո կաթը,

Ժպտում ե յերկիրն իմ հացի ու կաթի, —

Զնգում ե յերկաթը:

Հնոցներին մեր ջեռ տվել ես ձե ու շունչ,

Մեզ կյանք տվիր,

Մենք քեզ եյինք գիմում որերում մըրկաշունչ

Տասնյոթ թվին...

Վոր միշտ ո՛ր, վառ պահես քո հուրը անմար
Դու մեր գլխին:

Ասում են յերբ դու քո պոռնկն ես հանել
Լուսաբացին,

Հոսել ե արլունը, յերկիրը կանգնել ե —

Արյունի, լացի...

Հանել ես քո սկավառակը արյունով շաղախված —

Թագնվել ամպերի մեջ.

Սակայն ջերմացրել ես, ջերմացրել ես վաղվա

Որերը մեր...

Լվացել ես դաշունով արնոտած՝ քո ճակատը

Մեր ջինջ ջրերում...

Վոսկե Մազերով մի վրձին քո մասներում պահած

Մեր ընթացքն ես նկարում, —

Խորհրդային յերկրի արեամբոր պահակ —

Իմ յերկրի դարուն:

Բարձրանում ես արև շողշողուն մի շալ

Գրած ուսերիդ,

Վողջճւյն արև քեզ, քո լուսաշաղ —

Ճառագայթած լույսերին...

Շողերից քո առատ մեղրակաթ ե ծորում

Իմ յերկրի համար:

Յ Ե Ս Ս Ի Ր Ո Ւ Մ Ե Մ

Յես սիրում եմ, յերբ ջրերն են կարկաչում,
Յերբ լողում ե ջինջ կապույտում արևը,
Յերբ նախիրն ե լուսարացին բառաչում —
Ու բարձրանում ծաղկազարդած սարերը:

Յես սիրում եմ գարնան որն ե յերբ բացվում,
Կանաչում են կոլեկտիվի հողերը.
Յերբ արևն ե ջրերի մեջ լվացվում,
Շրվշվում են յեղեգյա գորշ փողերը...

Յես սիրում եմ աշխատանքի կարոտով
Յերբ նոր գյուղն ե աղաղակով արթնանում.
Հանդ են գնում մարդիկ ձիով ու վոտով —
Ու մարդ ու կին, աղջիկ, աղա ու մանուկ:

Գ Ր Ո Հ

Մեր դեմ լեռները բարձր ու վեհ
Ու անտառները սաղարթախիտ,
Ծրփուն արտերն են նազով փռվել,
Կարձիր արևը՝ նրանց գլխին,
Մեզ ընդունեցին զուռնով, ծափով
Կոլտնտեսականները սեահողի,
Արտերում հասուն ու ծափծափող.
Մեր վրանները մենք վար թողինք:
Ցորենի հասկերը ծիծաղեցին
Բարձրացան խինդով իրար շալակ.
Արևը փռվեց դաշտում անծիր
Ու իր հրերը ցրեց առատ:
Առանք ամենքս մի-մի դերանդի
Մտանք արտերը վոսկեջրած,
Ախ, ինչքան լավ եր, — անհուն խանդից
Առլուծներ դարձանք դաշտի վրա:
Մինչև իրիկուն արտերում ջինջ
Մենք վոչ մի վարկյան հանգիստ չառանք,
Յեվ «թատրոն ավինք» դաշտի միջին

Յեւկ կոլտնտեսութեան շեֆ դառանք:
 Դաշտը դարձել եր հարսանքատուն,
 Արեւը՝ գինի, հոգին՝ յերգասաց,
 Պայքարի եյինք մտել անդուլ —
 Հաղթանակների փալուով արբած:
 Զեզ չեմ մոռանա Զոյա, Մարո,
 Մեջքից կռացած Առհան աքիր...
 Սառն աղբյուրներ, արտ ու արոտ, —
 Ու քեզ տավարած «աղքատ» մուքի:
 Հուշերիս կինո-լենտի վրա
 Դեռ շափշափում ե իմ գերանդին,
 Բերանից թռչում ե հուր ու կրակ,
 Կրակ աշխատանքի և յեռանդի:
 Իսկ իրիկնային մարմանդ միգում
 Բարձրանում են դեզերը դեղձան, —
 Վողջճւյն արտերի ջինջ իրիկուն —
 Կարմիր յերգերի իմ ծիածան:

Մ Ր Գ Ա Հ Ա Ս

Քաղում են մրգերը ու իրար կանչում
 Աղջիկները յերկրիս՝ նախշուն աչքերով,
 Յերջանկութեան, փառքի խինդն ե կարկաչում,
 Յերկիրն իմ վողողվել ե անուշ մրգերով:

Արևի տակ ծիծաղում են վողկույզները խաղողի,
 Խաղողի ճիթերից մեղրակաթ ե հոսում,
 Մրգերի բուրմունքն ե բղխում ծառից, հողից,
 Ծանրացած ծառերն են կարծես փափսում:

Դեռ վոչ մի մրգահաս, դեռ վոչ մի աշուն
 Այսքան միրգ չի տվել իրա որում,
 Սարերը, ձորերը հագել են նախշուն,
 Մեր այգիներից մեղրակաթ ե ծորում:

Քաղում են մրգերը ու իրար կանչում
 Աղջիկները յերկրիս՝ նախշուն աչքերով,
 Յերջանկութեան, փառքի խինդն ե կարկաչում, —
 Յերկիրն իմ վողողվել ե անուշ մրգերով:

2736
40




Կ Ա Ր Ո Տ

Գալիս ես ու անց կենում
 Զրի նման կարկաչով
 Մեր որերը պայծառ, ջինջ,
 Յերկրի վրա թողնելով
 Մի պատմություն վոսկեշող,
 Մի պատմություն հմայիչ:
 Կանաչ արոտ, կանաչ արտ,
 Անտառ, հովիտ ու պուրակ:
 Ա՛խ, քարափներ ու ձորեր,
 Զահելություն վարդավոր,
 Զահելություն իմ ուրախ,
 Խինդով վարար իմ որեր...
 Ակումբ, խրճիթ, լիկկայան,
 Լույս ու ուսում ու բջիջ,
 Բանակ կոմյերիտական
 Հանեցիր մեզ պաշարով
 Մուտ որերի խարխափից
 Ու ավեր մեզ լուսե կյանք:

Կարոտել եմ ձեր լեզվին
 Իմ կոմյերիտ ընկերներ,
 Կարոտել եմ ձեզ հորից...
 Միշտ թնդում ե իմ հոգում
 Աշխատանքի յերգը ձեր—
 Աշխատանքը ձեր հողի:

Գալիս ես ու անց կենում
 Զրի նման կարկաչով
 Որերը մեր՝ պայծառ ջինջ,
 Յերկրի վրա թողնելով—
 Մի պատմություն վոսկեշող,
 Հուշեր պայծառ գրավիչ:



Ա. Շ. Ո Ւ Ն

Ծիծաղում են իմ շուրջը
Աշնան մրգերը բեղուն,
Աշուն, մրգի ու յերգի
Լիություն ես հեղեղում:

Դու նման չես սիրտ մաշող
աշուններին տխրաճայն
Ու որերին տրամաշուք,
Վորոնք չեկան ու անցան:

Ծիծաղում են ծառերը,
Ո՛ր, լիություն, լիություն,
Յերկրի վրա նորոք—
Արևային խնդություն:

Պոետական ջերմ վողջուն
Ծառերին քո խըշխըշուն,
Որերին քո լուսաշաղ,
Յե՛վ մրգերին քո նախշուն:

Ծիծաղում են իմ շուրջը
Աշնան մրգերը բեղուն,
Աշուն, մրգի ու յերգի
Լիություն ես հեղեղում:

Պ Ա Ր Զ ՈՒԹ Յ ՈՒՆ

Ձերը կարկաչում,
 Կանչում են ու անցնում,
 Մենակ դուն ես մնում
 Իմ հույզերի ամառ,
 Վոչ մի շող այս կյանքում
 Դու յերբեք չես կորցնում,
 Պարզությամբ քո լերդի
 Մնում ես հար անմար:
 Արևի շողերով
 Կըմտնես գլուղը մեր,
 Յերգերի իմ առու,
 Արևի ծընծղա,
 Ու կասես—սրտան այս
 Հույզերն ե դրկել ձեզ—
 Արևի հրով թեժ,
 Արևով գրած:
 Կտեսնենք այս գրքում
 Պատկերներ ծաղկազարդ:

Արտներ ու արտեր,
 Հետո՝ քրտինք, արյուն...
 Անհուն ձեր վաստակը
 Ձեզ հալալ ու հարազատ,
 Այդ վաստակի վրա
 Թափած խինդ ու ավյուն:

Յես սիրեցի Դ, ձեզ՝
 Հողերի ու քարի
 Յեռանդոտ ու քաջ
 Բյուրավոր ընկերներ:
 Պոետական վողջճէյն,
 Արեգնափայլ դարի
 Ո՛ր, պայծառ գալիքի
 Անանուն կոթողներ:

Համայնական բերրի
 Մե ցեղերի վրա
 Լսե՛ք, խըշխըշում են
 Արտերը նարնջե,
 Արևը մաղում է
 Վերից հուր ու կրակ,
 Ո՛ր, դաշտերի վրա
 Լիությունն է իջել...

Համայնական դաշտերի
 Լայնանիստ ծոցում
 Թնդում է ձեր լերդը,

Յերգը հաղթանակի.
Արեգակը ձեր դեմքն է
Խինգով վոսկեղոծում —
Հողերի ու քարի
Վարպետներ անգին:

Ձեր հողերի վրա
Ձերը յերկաթե
Իրենց հունձը արին՝
Բերքաբեր ու վարար...
Այս հողերում անծայր
Դուք արյուն եք թափել,
Դուք զոհեր եք տվել,
Առյուծներ դառած...

Դեռ վոչ մի սերմնացան
Ու վոչ մի գյուղացի
Այսքան բերք չի հնձել
Այս հողերի վրա,
Պոետական վողջո՛ւյն
Ձեր ցորենի հացին,
Ձեր որերին պալծառ,
Ջինջ ու հուրհրան:

Ջրերը կարկաչում,
Կանչում են ու անցնում,
Մենակ դուն ես մնում
Իմ հուլիների ամառ,

Վոչ մի շող այս կյանքում
Դու չերեք չես կորցնում,
Պարզությամբ քո յերգի
Մնում ես հալ անմար:

ԱՐԻԻԿԱ ԳՐՎԱԾ ԼԵՆԻՆԱԿԱՆ ՈՒՄ

1

Դրսում ցուրտ է ու բուք,
Ցուրտը խստաբարո
Փռել է իր թեկերը
Քաղաքի վրա,
Յես սրտիս մեջ պահած
Մի արևի կարոտ —
Հայացքս հառել եմ
Ալազյաղի վրա:
Զյունախառն քամին
Իմ տան դուռն է բաղխում,
Դրսում մուլթ ու մեզ,
Դրսում բուք ու բորան...
Գյումրին կուչ է յեկել
Տանիքներով խաբխուլ,
Ու չի գտնում վոչ մի
Տաք որորան...
Գյումրին, ահա գյումրին,
Որորվում է թախծի

Մառախուղով ծածկված
Քանդված որորոցում...

Ահա հին քաղաքը,
Տները ցանուցիր,
Վորտեղ կլանքը, կլանքը
Եւ չի ալեկոծվում:

2

Յերկու, լերկու քաղաք,
Յերկու տարբեր ավան,
Մեկը փոշեթաթախ՝
Վորպես հոգնած ճամբորդ...
Մյուսը բարձրանում է
Զնգուն ու նորավարտ —
Զարմանալի, դժվար —
Յերկաթեղեն ճամբով:

Այս քաղաքի վերելքը
Շատ է զարմանալի,
Հիանում ես, ինչպիսի
Թափով է բարձրանում...
Ո՛ր, մարդկային ուժի
Մի հրեղեն ալիք
Դեպի մեր յերազած
Պայծառ դարն է տանում:
Այստեղ դու կտեսնես
Դեմքեր բանվորական,

Վորոնք կառուցում են
Մի հոյակապ չերկիր,
Վորոնք աշխատանքում
Պայծառ մի ապագա
Դու կարող ես կարգալ՝
Հույզերի ու յերգի:

Բարձրանում են հսկա
Շենքերը նորավարտ
Արեգակի ներքո
Այս լենինյան դարում,
Մի անսասան անուն,
Մի մտքի զորավար
Իր կտրող հայացքով
Սրանց սիրտը վարում:

Այս մեծ առաջնորդը
Բուլվարներից մեկում
Կանգնած բետոնապատ
Պատվանդանի վրա,
Արևի սկավառակը
Բռնած իր աջ ձեռքում
Միլիոնների սրտում
Բորբոքել է կրակ:

Այստեղ կառուցել են
Դորժարաններ անթիվ,
Ու ֆաբրիկներ, տներ,
Ու փողոցներ քարե,

Վորտեղ աշխատում են
Հազարավոր մարդիկ
Գլխներին պահած
առնչ արե:

Զրնդում է խրոխտ՝
Դեպոնների հեղքը,
Յերգը բանվորների —
Հազարավոր,
Վորտում է այստեղ
Մեր շինարար չերդը՝
Իմաստությամբ մի խոր:

Մ Ա Ք Ա Ռ Ո Ւ Մ

Ձեր շուրջը յերկաթե, բետոն ու պողպատ,
 Ձեր շուրջը անտառն ե վիշկաների,
 Արևը կախվել ե վոնց հաղթության փողկապ—
 Վիշկաներին:

Դուք անդուլ քանդում եք ընդերքը չերկրիս,
 Յերկրի արգանդից դուք նավթ եք հանում,
 Հերոսական ձեր վաստակն ու փառքն ե—
 Անմահանում:

Ձեր կոշտ մատներով հողի սիրտն եք քերում,—
 Քերեցեք ընկերներ անդուլ ու արի...
 Դուք հաղթող—հաղթող կլինեք վերջին դիրքերում—
 Համաշխարհային...

Ձեր շուրջը յերկաթե, բետոն ու պողպատ,
 Ձեր շուրջը անտառն ե վիշկաների.
 Արևը կախվել ե վոնց հաղթության փողկապ—
 Վիշկաներին:

Չ Ո Ն

Մի բանաստեղծի

Մարգկային հոգու դու ջերմ յերգասաց
 Ա. Ս ե ն ա ը

Քաջում ես որերի չերկաթած ճամբով
 Իմաստուն խոհերի մի բեռ շալակիդ,
 Ջրնդուն իմ դարի իմաստուն ճամբորդ:

Յերգերով հրաշունչ, քայլերով խրոխտ
 Քաջում ես աննկուն, ծանրախոհ, խստասիրտ—
 Ո՛ր, կարմիր շփուրով անհողդողդ:

Քո շուրջը չերգում ե չերկաթը, կիրք,
 Կանչում են ջրերը կարկաչով անուշ,—
 Ժպտում ե դարնան պես չերկիրը:

Յերգերում քո հրե արևն ե լողում,
 Արևի աչքերով չերգերի վարպետ,
 Մեր ներկան արևի ջերմով ես վողողում:

Քո պայծառ քնարով լերդում ես նորավարտ
Յերկիրն իմ, լերկիրն իմ՝ շողշողուն լուսե,
Յերգերի կուռ մարտիկ, յերգերի զորավար:

Քայլում ես որերի յերկաթած ճամբո
Իմաստուն խոհերի մի բեռ շալակիդ,
Զրնգուն իմ դարի փմաստուն ճաշխորդ:

Գ. Պախարուհ

Յերեք բարդի,
Յերեք ծառ,
Որեր անդին
Ու պայծառ...
Աստղերի տակ,
Մահարի,
Յերդիդ հուրը
Զի մարի...
Ո՛ր, լերդերի
Ծիածան,
Յերգի գերի,
Յերգի ծառ:
Կարկաշում ե
Յերդը քո
Կապույտ լերկնի
Ներքո...
Դու կըմնաս
Միշտ պայծառ, —
Յերեք բարդի,
Յերեք ծառ:

*
**

Յեղած ահա մեր

Գնդերը բազում

Շարժում են կյանքը —

Իմաստուն թշամբ խոր,

Մենք մեկ հապտա

կյանք ենք ներազում —

Ու կառուցում ենք

Կովով ահավոր:

Մ Ե Ր Հ Ա Յ Ր Ե Ր Ը

Յերբ տիրակալ ե դառնում բուքը նորին,
Վնդատում ե քամին ու վռնում հողմը,
Յերբ լուսինը դանդաղ ու ծանրորեն —
Լողանում գալիս ե անապատի կողմը...


Յերբ ծովը ծեծում ե իր ափերը մախճուր,
Ամպերն են ծանրանում ծովի վրա,
Կամ լուսալցի վոսկե շողերն են կախվում
Ո՛ր, արդեն արթնացած քաղաքի վրա...

Գալիս են վարպետները հողի ու քարի,
Կառուցումի խինդը պահած սրտերում խոր,
Վոր թափով բարձրանան իմ չերկաթե դարի —
Կաշանները լուսե, ծխնելուղները ծխոտ:

Առած բահ ու քլունդ, դինամիտներ անթիվ
Մտնում են հանքերը, լեռները բարձրաբերձ,
Ենթուղիադմով վառված հերոսները նավթի —
Յերկրին շունչ են տալիս ու ձեզ...

Այս գորշ, փշախառն անծայր անապատում
 Կառուցում են խինդով մի արևոտ երա,
 Ընկած Քսանվեցի հուշարձանն են պատում
 Արյունով հագեցած ավազների վրա...

Վոր հիշեն զարերում, վոր զարերում հիշեն
 Հայրերին մեր ընկած՝ Քսանվեց կոմիտարին,
 Վորոնց սեպտեմբերյան մի արյունոտ գիշեր—
 Տառասկների վրա սրախողխող արին...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Դարձ	3
2. Չապայի	4
3. Լիբիքական լերդ	7
4. Անկում	9
5. Յերգ արևին	10
6. Յես սիրում ես	12
7. Գրոհ	13
8. Մրդահաս	15
9. Կարոտ	16
10. Աշուն	18
11. Պարզություն	20
12. Լիբիկա գրված Լինինականում	24
13. Մաքսում	28
14. Ձոն	29
15. Գ. Մահարուն	31
16. Յեղած ահա	32
17. Մեր հայրերը	33



ՀՀ Ազգային գրադարան



NL0357596

70 ABГ. 1936

559

54406

103 ABГ. 1936

9.1.1936 50

